ած է «գողացան», «վերացեալ եղև», «անյայտ եղև», «գողացեալ տարան», մինչև անգամ մի յիշատակարանում * ասուած է, թէ «չորս ամէր, որ զսուրբ Լուսաւորչի աջն կորեալ էր ի Սսոյ», ինչպէս գողացան, ո՞վ էր յանցաւորն, ո՞վ գտաւ, ինչպէս յայտնուեցաւ, ոչինչ չեն գրում։ Թովմայ Մեծոփեցին, որ Հայրապետական աթոռի փոխադրութեանը մասնակցել է և ինքն է նկարագրել այդ դէպքը, իւր յիշատակարանում ոչինչ չի յիշում թէ Ս. Աջի անյայտանալու և թէ Ս. Էջմիածնումն յայտնուելու մասին։ Նա, որ այնքան պատճառներ է մէջ բերում, որպէս զի Սսի աթոռակալների անարժանութիւնն ապացուցանէ և Ս. Էջմիածին փոխադրելու կարևորութիւնն և իրաւունքներն հաստատէ, թէև այդ անում է մեծ մասամբ տեսիլներ պատմելով, Ս. Աջի համար միայն մի բան է յիշում։ Կիլիկեցիք «թողին, ասում է, զկանոնեալն ի Լուսաւորչէն և յաջ Լուսաւորչին երդնուին, որ ոչ զ Լուսաւորիչն ճանաչէին և ոչ զաջ նորա գիտէին։» ** Այս խօսքերից կարող ենք մակաբերել, թէ նորալուութեան պատճառն այն պիտի լինի, որ Թովման, երևի, առաւել նշանակութիւն էր տալիս ոչ թէ Ս. Աջին, Ս. Լուսաւորչի դրած կանոնների պահպանութեանն և իրա-

* Նստ. Հ. 155.

** Թովմ. Մեծոփ. Յիշատ. 58.